**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| h/h Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առակրության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| ՀՀ արդարադատության նախարարություն 19 դեկտեմբերի 2023թ. N/27.1/53966-2023թ. պետական փորձագիտական եզրակացություն | 1. «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 2-րդ կետով նախատեսվում է՝ «Թույլատրել Հայաստանի Հանրապետության Կոտայքի | Ընդունվել է: | **«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու որոշման նախագիծը լրամշակվել է:** |

| | | | |
|---|---|---|---|
| | մարզի Գառնի համայնքի ղեկավարին 2024 թվականի բյուջեի կատարման ընթացքում կատարել ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ բյուջեի 20 տոկոսի չափով:» Սակայն Նախագծի նախաբանում բացակայում է սույն կարգավորման լիազորող նորմը, ուստի անհրաժեշտ է Նախագծի նախաբանում որպես լիազորող նորմ նախատեսել նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:<br>2. Նախագծին կից ներկայացված հատվածներն անհրաժեշտ է ներկայացնել | | |

| | | | |
|---|---|---|---|
| | հավելվածների ձևով՝ նշելով դրանց գլխագրերը: Իսկ Նախագծում նախատեսել դրույթներ՝ հավելվածները հաստատելու մասին: | | |